ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՀՈՂԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVI—XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Հ. ՓԱՓԱԶՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

XVI—XVII դարերում պետական սեփականություն հանդիսացող բոլոր կալվածները, որոնցից ստացվող եկամուտները անմիջապես տնօրինվում էին սեֆևիների արքունիքին կից ֆինանսական գործերի կառավարչության կամ «բարձրագույն դիվանի» կողմից, կոչվում էին «դիվանի հողեր» (արազի-յե դիվանի)։ Այս անվանումը նոր չէր։ Այն գալիս էր իլխանական և ավելի վաղ ժամանակներից և պահպանվեց մինչև Նադիր-շահի ժամանակները (XVIII դ.)։ Նրանց ծավալը, սակայն, ընդարձակվել կամ նվազել է քաղաքական իրադրության համապատասխան։

Դիվանի հողերն ընդարձակվեցին սկսած XVI դարի կեսերից մինչև XVII դարի 30-ական թվականները։ XVII դարում արդեն Արևելյան Հայաստանում մշակելի հողերի 50 տոկոսից ավելին պետական էր։ Դա հետևանք էր հատկապես այն բանի, որ հաճախակի կրկնվող արշավանքներն ու բնակչության մասսայական տեղահանությունները պատճառ էին դառնում նաև կալվածատիրական գյուղերի ավերման, որոնց տերերը, զրկվելով աշխատող ձեռքերից՝ հողագործ ռայաթներից, նմանապես ստիպված էին լքել այդ գյուղերն ու հեռանալ։ Շատ հաճախ իրենք՝ հողատերերը, որոնք պետական կամ զինվորական պաշտոններ էին զբաղեցնում, պատերազմում իրենց սյուզերենի պարտության պատճառով ստիպված էին քաղաքական էմիգրացիայի ենթարկվել։ Այդ դեպքում նրանց հողերը անմիջապես գրավվում էին հօգուտ պետության և անցնում դիվանի հողերի շարքը։ Նման երևույթ տեղի էր ունենում նաև այն դեպքում, երբ խաներն ու բեկլարբեկիները զեղծարարության կամ անհավատարմության մեջ ամբաստանվելով՝ հեռացվում էին պաշտոնից, և նրանց պատկանող բոլոր շարժական և անշարժ գույքը, այդ թվում նաև մուլքերը, գրավվում էին հարքունիս և դրվում դիվանի տրամադրության տակ։

Իսքանդար Մունշին նկարագրելով 1561 թ. Շահ Թահմազի կողմից Թիֆլիսի գրավումը և Քարթլիի թագավոր Լվարսափի մահը, չի մոռանում հիշել, որ Լվարսափին պատկանող Թիֆլիսը մոտակա գյուղերով հանդերձ «գտնվում էր բարձրագույն դիվանի տրամադրության տակ» և որոշ ժամանակ հետո միայն, երբ Լվարսափի որդին՝ Դավիթը գալիս է շահի մոտ, հնազանդություն է հայտնում և մահմեդականություն ընդունում, նորից այդ վայրերը տրվում են նրան[1]։

XVII դարի սկզբում Շահ Աբբաս Ա-ն, կազմակերպելով նոր կադրային բանակ, ձգտում էր ընդարձակել դիվանի հողերը, որպեսզի կարողանար նոր զինվորականությանը ապահովել անհրաժեշտ քանակությամբ թիուլներով և

[1] Տե՛ս ՀՍ, էջ 89։ اسکندربیگ ترکمان، تاریخ عالم‌آرای عباسی، تهران، ۱۳۳۴، جلد یکم، ص.